«Ֆոկուս» արվեստի ՀԿ-ն նախաձեռնում է «Կինո. գոյաբանական հարցեր և տեսություն» ժողովածուի հրատարակումը: Այն ընդգրկելու է մասնագիտական ընթերցանության համար պարտադիր համարվող մի շարք հոդվածների թարգմանություն և ծավալուն նախաբան: Հիմնական նպատակը կինոյին առնչվող կարևոր գրականությունը հայ ընթերցողին (պրոֆեսյոնալներին) տրամադրելն է, ինչը կխթանի տեսության հարցերին վերաբերող հայերեն բառապաշարի և մտքի զարգացումը:

Ժողովածուն կներառի երկու բաժին. առաջինում կընդգրկվեն
Վալտեր Բենյամինի «Արվեստի գործը տեխնիկական վերարտադրելիության դարաշրջանում»,
Անդրե Բազենի «Լուսնկարչական կերպարի գոյաբանությունը» և «Տոտալ կինոյի առասպելը» հոդվածները: Սրանցում խոսքը կինոյի և արվեստի որոշ այլ տեսակների գոյության պայմանների և նախադրյալների հարցն է քննվում, ինչը շահեկան է կինեմատոգրաֆի նեղ հարցերին մոտենալուց առաջ:

Երկրորդում կընդգրկվեն
Անդրե Բազենի «Կինոլեզվի էվոլյուցիան»,
Սերգեյ Էյզենշտեյնի «Մոնտաժ 1938»,
Արտավազդ Փելեշյանի «Դիստանցիոն մոնտաժ» հոդվածները:
Այս բաժինն ավելի շատ նվիրված կլինի մոնտաժի հարցերին և հավերժ վեճին՝ իմաստը ծագում է առանձին կադրի ներսի՞ց, թե՞ երկու կադրի կցումից:

Ժողովածուն կեզրափակվի հավելվածով՝
Փիլիսոփա Ջորջո Ագամբենի «Գի Դեբորի կինոն» տեքստով, որը «Պատկեր և հիշողություն» գրքի մի գլուխն է: Այստեղ հեղինակը, հղելով Դեբորին, փորձում է ապացուցել, որ մոնտաժն է հենց կինոյի գոյության պայմանը և բնույթով այն ամենից շատ նման է պոեզիային: Այս տեքստը կարծես ի մի է բերում ողջ ժողովածուն ճանապարհ հարթում հետագա խոսակցությունների համար: